



*Համալսարանի պայմաններում
ուսուցման արդյունավետ
կազմակերպում*

8 խորհուրդ դասավանդողներին՝ ինչպես զարգացնել ուսանողների առցանց ուսուցումը:

1. Ունենալ դասընթացի ուղեցույց, նկարագիր/Syllabus:
2. Պահպանել ուսանողի հետ շարունակական հաղորդակցումը առցանց միջավայրում:
3. Ծավալել օնլայն քննարկումներ ուսանողների հետ:
4. Ձգտել ձևավորել ուսանող-դասախոս անհատական շփումը:
5. Պարբերաբար կազմակերպել հարցումներ, թեստեր՝ ստուգելու ուսանողների ընթացիկ առաջընթացը:
6. Պարբերաբար ներկայացնել գնահատման պահանջները:
7. Հետևել ուսանողների աշխատանքին և տրամադրել խորհրդատվություն:
8. Բավարար ժամանակ հատկացնել պլանավորմանը:

Աղբյուրներ՝

1. Մելբուրնի համալսարան, Ավստրալիա: Melbourne CSHE
2. Կրթական տեխնոլոգիաների միջազգային հանրություն (ISTE)

1. Ունենալ դասընթացի ուղեցույց, նկարագիր/Syllabus

- Հստակեցրեք պահանջները: Ուսանողի համար մատչելի ձևով ներկայացրեք մասնավորապես՝
- դասընթացում ընդգրկված թեմաները,
 - առաջադրանքներին ներկայացվող վերջնաժամկետները, գրագողության կանխման մեխանիզմները,
 - գնահատման պահանջներն ու չափանիշները,
 - ուսանող-դասախոս հանդիպումների քննարկումների կանոնակարգված ժամանակացույցը:



Ուսանողին հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները ընդգրկեք ձեր առարկայի նկարագրում (Syllabus):

2. Պահպանել ուսանողի հետ շարունակական հաղորդակցումը առցանց միջավայրում:

- Պատրաստեք դասընթացին վերաբերող տեղեկատվական կարճ տեսանյութեր:
- Ուսանողներին ներկայացրեք ուսումնական շաբաթվա անելիքները, նպատակները, դասավանդվող թեմաների միջև գործող կապը:
- Տրամադրեք խորհրդատվություն և հետադարձ կապ ուսանողի առաջադիմության վերաբերյալ:
- Սահմանեք վիրտուալ խորհրդատվության ժամեր (“Virtual Office Hours”), ուսանողներին տեղեկացրեք՝ երբ կարող են դիմել և ինչպիսի հարցերով:



3. Ծավալել օնլայն քննարկումներ ուսանողների հետ:

- Կազմակերպեք օնլայն ֆորումներ, որտեղ ուսանողները կարող են տարբեր թեմաների շուրջ քննարկումներ իրականացնել:
- Ուսանողներին ներկայացրեք քննարկումներին մասնակցելու կանոններն ու ձևաչափը:
- Ապահովեք հավասարությունը օնլայն միջավայրում: /Ուսանողների հավասարաչափ ներգրավածությունը քննարկումներին, օբյեկտիվությունը/



4. Ձգտել ձևավորել ուսանող–դասախոս անհատական շփումը:


- Ժամանակ հատկացրեք ուսանող–դասախոս անհատական շփմանը և ինքնուրույն աշխատանքի մեկնաբանման նպատակով տրամադրվող հետադարձ կապին:
- Խրախուսեք ինքնուրույն ուսուցումը:
- Հաշվի առեք հուզական կողմը: Առցանց ուսուցման պայմաններում կարող է որոշակի մեկուսացվածության զգացում առաջանալ ուսանողների մոտ՝ դառնալով հոգեբանական ընկճվածության պատճառ:

5. Պարբերաբար կազմակերպել հարցումներ, թեստեր՝ ստուգելու ուսանողների ընթացիկ առաջընթացը:

Ահա մի քանի անվճար գոծիքներ/կայքեր քվիզ-թեստ պատրաստելու համար:


1. Interact 

2. Free Online Surveys 

3. Typeform 

4. Hot Potatoes

5. Survey Monkey 



Google Forms


Կարող եք կազմել թեստեր և հարցումներ նաև ՀՖԿՍՊԻ-ում ներդրված Google Forms գործիքի օգտագործմամբ:

8. Բավարար ժամանակ հատկացնել պլանավորմանը:

- Առցանց դասավանդումը սկսելուց առաջ մանրակրկիտ պլանավորեք թե տեխնիկական, թե բովանդակային մանրամասները:
- Փաթեթ հավագեք: Համոզվեք, որ ձեռքի տակ ունեք այն ամենն, ինչ անհրաժեշտ է ձեր առարկայի առցանց դասավանդման համար:

Ինչպե՞ս
դասավանդել
դիմակով.

3 խորհուրդ
դասախոսներին



Քիչ խոսեք

Սովորական պայմաններում դասախոսները շատ են խոսում: Նրանք բացատրում են թեման, հետո ավելի մանրակրկիտ բացատրում անհասկանալի հատվածները, պատասխանում ուսանողների հարցերին: Դիմակով դասավանդման պարագայում ցանկալի է քիչ խոսել: Փորձեք դասն այնպես պլանավորել, որ առնվազն կրկնակի քիչ խոսեք:

Համոզված եղեք՝ նոր մոտեցմամբ ևս կարող եք դասը շատ արդյունավետ անցկացնել:

Մոդելավորեք
ամեն ինչ

Շեշտը դրեք գործնականի վրա: Որևէ բան բացատրելու փոխարեն հնարավորություն տվեք, որ ուսանողները դա տեսնեն գործնականում, իսկ հետո նաև իրենք

փորձեն նույնն անել:
Միասին ուսումնասիրեք դեպքեր (case study), վերլուծեք, համեմատականներ անցկացրեք:

Կարևորեք
ինքնուրույնությունը

Հատկապես համավարակի շրջանում ուսանողի ինքնուրույն աշխատանքը շատ կարևոր է: Նման հանձնարարականները նպաստում են, որ ուսանողն ավելի ինքնուրույն և պատասխանատու լինի, հետազոտական կարողություններ զարգացնի, կարողանա տևական ժամանակ կենտրոնանալ որևէ թեմայի վրա: Ինքնուրույն առաջադրանքների պարագայում կարևոր է մանրակրկիտ ներկայացնել, թե ինչ եք ակնկալում ուսանողից:

Աղբյուր
www.smartclassroommanagement.com

